**Լրացուցիչ համաձայնագիր թիվ**
13.02.2026թ.-ին կնքված թիվ PDU-54-01-26
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք.Երևան** 12 . 08 .**2026թ.**

«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ «Ընկերություն»), ի դեմս Կորպորատիվ հաճախորդների սպասարկման և վաճառքների զարգացման վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ. թիվ Լ-ԵԼ-ՀՓ/261-25 լիազորագրի հիման վրա, մի կողմից, և ՀՀ վարչապետի աշխատակազմը (ՀՀ Կրթության տեսչական մարմնի) (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, մյուս կողմից (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր»), ղեկավարվելով Կողմերի միջև 13.02.2026թ. կնքված թիվ PDU-54-01-26 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 3.2 կետով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Կողմերը համաձայնության են գալիս Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Պայմանագրի թիվ 5 Հավելվածի «Հիբրիդ փոստ ծառայության շրջանակում տրամադրվող հավելյալ ծառայություններ» աղյուսակը փոփոխել և սահմանել հետևյալ խմբագրությամբ.

## Հիբրիդ փոստ ծառայության սակագներ

| Մեկ առաքանու սակագին (ՀՀ դրամ) | | | | | Պատվիրված առաքանու սակագին (ՀՀ դրամ) | «Հիբրիդ փոստ» ծառայության սակագին (ՀՀ դրամ) | Պատվիրված հետադարձ ծանուցման քանակ, ամսական | Հասարակ հանձնման մասին տեղեկացման սակագին (ՀՀ դրամ) | Պատվիրված հանձնման մասին տեղեկացման սակագին (ՀՀ դրամ) | Ծրար C65 սակագին (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մինչև 100 գր. | 101-250 գր. | 251-500 գր. | 501-1000 գր. | 1,001-2,000 գր. | | | | | | |
| մինչև 17 էջ | 18-35 էջ | 36-71 էջ | 72-100 էջ | 101 էջից ավելի | | | | | | |
| 320 | 500 | 800 | 1350 | 1950 | 60 | 200 | մինչև 40,000 հատ | 320 | 380 | 19 |
| | | | | | | | 40,001-ից ավելի | 250 | 310 | |

2. Պայմանագրի մնացած բոլոր դրույթները, որոնք նախատեսված չեն սույն համաձայնագրով, մնում են անփոփոխ:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 13.02.2026թ.-ին կնքված թիվ PDU-54-01-26 պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում 01.06.2026թ.-ից:
5. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
6. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| **ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝** | **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝** |
|---|---|
| «Հայփոստ» ՓԲԸ | ՀՀ վարչապետի աշխատակազմ |
| ք. Երևան, 0061, Արշակունյաց 65/5 | (ՀՀ Կրթության տեսչական մարմին) |
| ՀՎՀՀ՝ 02507464 | ք.Երևան, 0010, Հանրապետության |
| «Կոնվերս Բանկ» ՓԲԸ | հրապարակ,Կառավարական տուն 1 |
| Հ/Հ՝ 1930003703156000 | ՀՎՀՀ՝ 02505554 |
| Հեռ.՝ (010) 544-444 | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և | Հ/Հ՝ 900011024081 |
| վաճառքների զարգացման վարչության ղեկավար | Հեռ.՝ (010) 203-027 |
| | Գործերի կառավարիչ՝ |
| ---------- Գուրգեն Բաղդասարյան | ---------- Գարիկ Բոշյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |